



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 36

ՃԱՐԱՐ

5 ՄԱՅԻՍ 1907

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԽԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
Տարեկան 50 Ղրշ.	Տարեկան 54 Ղրշ.	Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

Զ Ե Ն Ի Թ

Իր ամէն մասանց մէջ կատարելապէս խնամուած միակ ժամացոյցը զոր կարելի ըլլայ յանձնարարել և երաշխաւորել այն բացարձակ ճշտութեան համար՝ որ իր յատկանիշն է:

ՄԵՆ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՉ 1900.

ԱՐՏԱԳՈՑ ՄՐՑՄԱՆ ՄԻԼԱՆ 1906,

Հանդերձ ժիւղի անդամակցութեամբ.

Թուրքիոյ և բովանդակ Արեւելքի համար միակ ներկայացուցիչը

Գ. ՍԱՐԳԻՍՕՑ Ե Ի ԸՆԿ

Մեծ մթերանոց ամէն տեսակ ժամացոյցներու, չղթաներու և գոհարեղէններու:

Կ. Պոլիս, Պաղէկ-գաբու, Օռոզի-Պաֆ (Էօւկր-Էֆէկի) վաճառատան դիմաց Թիւ 16,


ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(آ. آمدوریان) شرکت صتیبه مطبعه — باب عالی جاده سنده نوسه ۵۷

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաղէկ-Ալի ճաշսէսի Թիւ 52

Հատոր 40 փարսա



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
լիամզամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը ժողովոյ կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅՐԱՅՈՒՆ ԿԱՅԸ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

[MANUFACTURING COMPANY]



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւ լագործութեամբ,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախոյն մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՆԱԽԱՐԱՐԱՆԻ ՎԱՅՈՒՆՆԵՐ

- | | |
|---------------|--|
| ԲԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՍԱՐ | Չարչը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձեւեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւղօղլուի տունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԴԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 36

ՇԱՐԱԹ

5 ՄԱՅԻՍ 1907

ԶՈՒԱՐԹ ՔՐՈՆԻԿ

Մայիսի գեղազուարճ սա առաջին շաբթուն, ուր դալարիք կը ծլին, սուխակները կ'երգեն, և բնութիւնը կը ծիծաղի, մենք ալ — եթէ կը ներէք — ծիծաղինք պահ մը մեր նորեւուկ և ինքնակոչ բանաստեղծներուն վրայ, որոնց նշանաբանն է ներկայ ամիսը:

Գրականութեան է'ն բարձր, վսեմ ու գեղեցիկ սեռը որ բանաստեղծութիւնն է, կը քաշկռտուի, կը դատաւիտուի է'ն ստոր, միջակ ու տգեղ գրիչներու քմահաճոյքէն, այնպէս որ իրենց ցափռտուքներուն քով՝ արժանի բանաստեղծներ կը սարսռան, ու մեռելներուն ալ ոսկորոտիքը հողակոյտներու տակ կը դղրդուին, այնքան տհաճոյ, այնքան պաղունակ արտագրութիւններ կը վխտան հրապարակի վրայ:

Նոյն օրինակ բանաստեղծի մը գրչին տակ վարդը կ'անիծէ կարծես իր գոյութիւնը, սոխակը իր ծնունդը, լուսինն իր արծաթաշող փայլը, առուակը իր կարկաչը, կոյսը իր գեղը, այնքան կը չարչրկուին անոնք, բռնազրոսիկ դարձուածքներէն:

Երիտասարդ Եսկիւլապ մը որ դըպրոցական չըջանը աւարտած նետուած է հրապարակ, անպատճառ ստորագրութիւն մը կուզէ ունենալ ո' և է թերթի մը կամ պարբերականի մը մէջ, և այն չըջանաւարտը որ վարդն ու սոխակը երգած չէ ոտանաւոր, սկաւր կը նկատուի իր նմաններուն մէջ և անկարող ո' և է գործի մը ձեռնարկելու:

Ուսմունքը լո՛ւնչպէս է կը հարցնէ վաճառականը գրագրի մը համար, և անմիջապէս կը պատասխանուի իրեն՝

— Ճուրերու պէս ոտանաւոր կը գրէ, գրածները չէ՞ք կարդացած...
Թօհաֆ բա՛ն...:

Իբր թէ վաճառատունը գրական շաբաթաթերթի մը խմբագրատունը ըլլար, ուր պիտի գրադեր տադեր հիւսելով վարդը լուսնին հետ խառնելով և կամ սոխակին բերնին մէջ դնելով առ կոյսն սիրային արտայայտութիւններ:

Եթէ ներելի ըլլար և կամ կարելի, պրպտել ժաֆէքներու գրպանները մեր աղուամազեան չրջանաւարտներուն, հոն պիտի կրնայինք գտնել կէս քաշ թուղթի վրայ գրուած ոտանաւորներու արձակ մը, կիսաւարտ կամ լման, որոնք տասն անգամ ընդօրինակուած և այսցելութիւն տուած են շաբաթաթերթերու խմբագրատունները, բոլորն ալ անտիպ ու ան... տիպ:

Ընդհանուր փափաքը կամ ունակութիւնը զոր կը տեսնուի այսօր մեր երիտասարդներու վրայ դէպի բանաստեղծութիւնն, ծնունդ առած է վարժարաններու ծրագիրներուն մէջ արմատացած դասախօսութենէ մը «գրական դասընթաց»։ Ահա այդ ճիւղն է որ զանոնք բանաստեղծութեան կը մղէ, գիշերները չի քնացներ զիրենք, մազերնին կ'երկարաձգէ, քալուածքնին, նայուածքնին կը փոխէ, ակնոց կրել կուտայ քիթերնուն, վերացական կընէ զիրենք և կրկնատոմարէն աւելի եռավանկ յանգին սէր կուտայ:

Երկու տող արձակ նամակ մը գրելու կարողութենէն զուրկ երիտասարդի մը փորձեցէք ոտանաւոր մը գրել տալ, և պիտի տեսնէք, համոզուիք թէ վայրկենաբար ձեր առջև պիտի դնէ սա քառեակին պէս բաներ մը՝

Սոխակն անդէն կը դայլալէր հեռալուր,
Կես գիշերին, մինչ արձաքէ վառ լուսին,
Ցաքած վերեւ չնաղագեղ վեհ կուսին,
Ու ջաղացքը կաղար նորէն միշտ ալուր:

Համայն:

Ահա մեր նոր բանաստեղծութիւնը, ահա մեր օրուան գրական զաւակներուն կարողութիւնը, որոնց համար պէտք է... ամէնանք, ու մտածենք լրջօրէն իրենց վրայ: Անոնք չեն դադրիր կ'արտագրեն, ու պիտի շարունակեն ալ, եթէ մեր կարողագոյն գրիչներէն ոմանք հրապարակ նետուելով, իրենց վարժ գրչին, կուռ ոճին շնորհիւ չարգիլեն ու չի ջանան առաջը առնել այս համաճարակին, որ գրական ախտ մը կրնայ համարուիլ:

Մեզի վաճառականութիւն պէտք է, հացին ճամբան և զայն ապահովելու է՛ն բռաթիֆ միջոցները պէտք են մեզ, որպէս զի կեանքը, ապրուստը իր գոյութիւնը պահէ, և ոչ թէ թռուցիկ բանաստեղծութիւնը որ, քմահաճոյք մըն է, սնդիկի պէս դիւրասահ, աղի պէս դիւրահալ:

Ձեմ ըսեր թէ գրականութիւն և բանաստեղծութիւն չպիտոյ բաներ են մեր պատանիներուն համար, և չեմ պնդեր թէ անպատճառ պէտք է հեռացնել այդ ճիւղերը դպրոցական ծրագիրներէն, բայց աւելի պատշաճ չըլլա՞ր, երբ անոնք աւանդուին իբր ոչ կարեւորագոյն գիտելիքներ, նա մանաւանդ երբ դասախօսը հաճի աշակերտներուն հասկցնել ու համոզել սա ճշմարտութիւնը թէ՛ բանաստեղծութիւնը վերացական է լոկ, անոր հետեւող մասնագէտներ չատ ցանցաւթիւ մը կը կազմեն մեր մէջ եւայլն:

Սխալ գաղաբար մըն է արդեօք:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԷ ԱԻԵԼՑԱԾ

Ես ալ գէշ աղէկ քննութիւններ անցուցած եմ — աւելի գէշ քան աղէկ — սակայն կերդնում որ երբէք օր մը քննիչի մը կամ քննիչներուն ներկայութենէն ես զիս քաջալերուած չեմ գտած, ընդհակառակը, անոնց ներկայութեանը, ես խեղճ աշակերտ, գիտցածս ալ ստէպ կը մոռնայի, ինչպէս այսօր, ոչ նուազ խեղճ քննիչ, չգիտցածս ալ կը սորվիմ գրեթէ միշտ:

Ժամանակին մեր վարժարաններուն քրննիչները այնքան հոգիս հանած են որ, հիմա պարզապէս վրիժառական անուշ զգացումէ մը մղուած, հաճոյք մը կը գտնուէր ներկայ գրտնուելով քննութիւններու, որոնք այնքան քաղցր յիշատակներ կարթնցնեն մտքիս մէջ:

Երեւակայեցէք անգամ մը որ այն վարժարանը, որ զիս չընտանաւ որտեղ, արական սեռը իգականէն տարբերելու համար, երկուքին մէջտեղ պատ մը քաշած էր. և քնականաբար իմ արդէ յիշատակներս պատին անդիլ կողմը կը տանին զիս:

Ինչ որ ալ ըլլայ, ես մասնաւոր հաճոյքով մըն է որ այդ մանուկներու աշխարհին մէջ կը դեգերիմ յուլիսի այդ տոթագին օրերուն մէջ, որովհետեւ հոն կը պատահի որ աւելի գուարճալի ժամեր անցընեմ քան տարեցներու միջավայրի մը մէջ:

* * *

Մանչերու վարժարանի մը մէջ ենք:

Պատիկներու պատմութեան դասին:

— Ըսէ տեսնեմ, կը հարցնեն աշակերտի մը, Նոյի տապանը ինչէ չինուած է:

— Փայտէ միւսիւ:

— Ուրիշ:

— Երկաթով միւսիւ:

— Ոչ, ուրիշ:

— Չիմէնթօյով միւսիւ:

— Չիմէնթօյով, ոչ ... ոչ ...

Շուարում պաղատող նայուածքներ դէպի քր ընկերները, լուռութիւն, երկու վայրկեան կ'անցնի:

Աշակերտներուն մէջէն, կապոյտ խոշոր աչերով տղայ մը, մաքր վեր կ'առնէ:

— Ես ըսեմ, միւսիւ, ես ըսեմ:

— Ըսէ նայիմ:

— Աստուծոյ հրամանովը ...:

Հիմա աղջկանց վարժարանի մը մէջ ենք: Բարձրագոյն կարգ: Գրաբարի քննութիւն:

— Օրիորդ, բառի մը գործիական հոլով ըլլալը ինչէն կը հասկնաք:

— Այդ բառին վերջաւորած մասնիկէն:

— Բացատրեցէք:

— Բառ մը գործիական է՝ երբ անոր ծայրի մասնիկները աւ, ու, ամբ և մը է:

Ասոր վրայ շատ մը օրինակներ տալ կուտան:

— Կաղին գործիականը ինչպէս կ'ըլլայ, կը հարցնէ քննիչ մը:

— Կաղամբ, միւսիւ:

Հիանալի է պարզապէս:

Դարձեալ աղջիկներուն կողմը.

— Գրեցէ՛ք, օրիորդ:

«Վարսաւիրայ ոմն անվարժ յարդարեաց զգլուխ Եզովբոսի՝ ածիլեալ»:

— Հիմա լուծեցէք: Մինչեւ որ լուծեց ես գիտեմ ինչ քրտինք թափել տուաւ մեզի:

— Կրնա՞ք ըսել, օրիորդ, կը հարցնեմ, թէ Եզովբոս այդ սափրիչին կրպակէն դուրս ելած ժամանակը ինչ ձեւ կտրուած մազեր ունէր:

Այդ հարցումը կ'ընէի միմիայն այդ աղջկան ըմբռնումին, հասկացողութեան չափը հասկնալու համար:

Բառորդ մը սպասեցինք, պատասխան չկայ, սե տախտակին վրայ կը նայի ու կը նայի:

Մեր բարեկամներէն քննիչ մը, որու գըլուխը ճիշդ պիլարտոյի գնդակի մը կը նմանի, աղջկան գործը դիւրացնելու համար կ'ըսէ իրեն.

— Ինչո՞ւ կը շուարիք, օրիորդ, խիստ դիւրին է գտնալ, հիմա ձեզ կը հարցնեն թէ Եզովբոս երբոր մազերը կտրել տուաւ, ի՞նչ ձեւ առնել տուաւ անոնց. և կամ պարզ ըսենք. երբ մարդ գլխուն վրայ ածելի մը պարագնել կուտայ, մազերն ի՞նչ ձեւ կտրուած կ'ըլլան, à la brosse, à la Torricelli, ի՞մ գլխուս պէս և կամ ձե՞ր գլխուն պէս:

— Ոչ, ձեռ գլխուն պէս, միւսիւ:

Ձեմ գիտեր թէ որքան սիրուն պիտի գտնէք այս պատասխանները, բայց ամէն պարագայի մէջ նոյն իսկ իրենց բերնէն ելած ըլլալուն կրնաք վստահ ըլլալ:

Յ. Ա.ՓԻԱՐ

ԲԵՐԱՑԻ ՕՐԻՓՐԴԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

ԿԱՐՄԻՐ ՀԱԻԿԻԹԸ

Շանիի գարեջրատան նեղ քուրտուփին մէջ երկու մուրիկներ՝ իննէն տասը տարեկան աղջիկ մը և հինգէն վեց հազիւ տարուբեր մանչուկ մը, երկու անբաժան տատարակներու պէս՝ կտուց կտուցի, հին ու պատառատուն ցնցոտիներու մէջ պատանգուած, զոյգ մը կենդանի մեռելներ էին կարծես, բաղդին զոհերը, ընկերականութեան վիժածները:

Աղջկանը ցիրուցան մագերուն մէջէն աղտոտ դէմքը՝ կը յիշեցնէր հին ու թանկագին քապլօ մը, վարպետ վրձինէ մը ելած, որուն շուրջ անքատուրմանը ժամանակին ընթացքին մէջ ո՛ր գիտէ գետնայարկի մը որ խոնաւ անկիւնին մէջ փոշոտած հատած էր ալ, այնքան խառնիճաղանձ երեւոյթ մը ունէր հէգ աղջիկը:

Մինիսիկ մանչուկը, որուն խոշոր խոշոր աչքերուն մէջ անմեղութիւնը կը վետվետէր, գլխահակ ու բազմամեայ տառապանքներու անտանելի կոտտանքին տակ ընկճուած՝ չափահաս մէկու մը ծանր ու խորիմաստ տըխրութեամբ քուրիկին քովիկը ապաստանած, ատեն ատեն թուշունի մը թեւերը կառնէր ու կը վազէր ամէն անոնց մօտ՝ որոնք կեանքի գուարճութիւնները ըմբոշխնելու կուգային Բերայի առաջնակարգ այդ գարեջրատունը:

Իրիկունս ստուերը հիմա տեղի տուած էր գիշերուան մութին, և տակաւին այդ զոյգ մուրիկները հոգ կապաւէին ի խնդիր ողորմութեան, ի խնդիր հացին:

Ֆուռ-ֆուռ բէշերու զգլխիչ շշնկոյցը, նոր պօթերու ձուինչը, ուրախութեան գահգահաներ, որոնք ամէն վայրկեան վեր կը ցատկընէին այդ պղտիկները, իրենց լուռ և անպատասխան վերաբերմով զոգցես կը սատկըցնէին զանոնք, երբ խեղճերը մինչեւ ներսի դուռը կը քաշկուտուէին, կ'աղբրուէին, կուլային, տասնոցի մը, հինգնոցի մը ակընկալութեամբ... բայց ի զուր:

* * *

Գիշերուան եկեղեցիներու զանգակները կը հնչէին և անոնց սուր արձագանգը զոգցես կուգար խափանել գարեջրատան խլացուցիչ պուռնախան, կոչնակներու երկաթ լեզուները լեզու ելած էին կարծես բողբոջիւլու ամէն անոնց՝ որոնք այդ նուիրական գիշերին Սատուծոյ տեղ Բաքոսը կը խնկարկէին, ալլանդակ անճոռնիութեանց մէջ թաթխուած:

Դուռնները տա՛ք, կոնակները տա՛ք, քըսակները տա՛ք, միմիայն քոյր-եղբայր մուրիկներն էին որոնք կը դողային մարմարներուն վրայ, անօթի ծարաւ:

Փոքրիկ մանչուկը, չի կրնալով համբերել և տոկալ անօթութեան դէմ, քուրիկին քղանցքը կը կրծեր, կը ծամեր և շողիկները կը վազէին իր կաթնաթոյր բերնէն, այնքան անօթի էր խեղճուկը, այնքան պարապ՝ ստամոքսը:

Պահ մը երբ մտնող ելլողներու շարքը դադրեցաւ, տղան կէս քուն կէս արթուն հարցուց քուրիկին,

— Տարմիր հաւտիդ դիպիտի՞ ուտենդ...

— Սո՛ւս, ըսաւ քոյրը, գլխուն կուրքի հարուած մը տալով, նայէ մէկը կուգայ կոր... գնայ մուրայ...:

Նեղքտրական հոսանքէ մը մղուածի պէս փոքրիկը ցատկեց տեղէն և խկոյն ընդառաջ վազեց գլխարկաւորի մը, ուրկէ... դաւազանի հարուած մը կերաւ կոնակին... Ու լալով ետ դարձաւ կրկին քուրիկին թեւին տակ ապաստանելու:

Մութը քանի կ'երթար կը թանձրանար, սեւ ամպեր ծածկած երկինքը, ալ աւելի կը ծանրացնէին գիշերուան մռայլը:

Ժամը երեքն էր:

Ամէն ոք դէպի տուն սկսած էր քաշուիլ, դուրսը կառքերը կը սուրային աջ ու ձախ, խանութներու փեղկերը ահագին մեծաշուրջ աղմուկներով տակաւ կը գոցուէին ու մէկ քանի Բաքոսեան տիրացուներ, անախորժ

քաջօֆոնիսներով երգ ի բերան իրենց տունե-
քը կշտապէին :

Եանիի սպասաւորներէն մին, սպիտակ ան-
ձեռոցը թեւին, պահ մը դուրս ելաւ ալքօլի
և նիքօթինի ծանր ու թանձր ազդեցութեան
տակ պայթող դուլիսը զովացնելու համար,
փոխելու համար այդ մթնոլորտը :

Պզտիկ մուրիկները երկուքը մէկ վրան
վազեցին, զիրենք մեռցնող անօթութեան
տուած ոյժէն կազդուրած :

Խիզճը երբեմն շատ համեստունակ սըր-
տերու մէջ կ'ապաստանի :

Սպասաւորը, թերեւս ինքն ալ ընտանիքի
և զաւակաց տէր, թերեւս եկած էր իր հացը,
զաւակներուն հացը, անոր ասոր սպասարկու-
թիւն ընելով հայթայթել, զգածուած այդ
երկու մատղաշ տղեկներուն ատանկ գի-
շերուան մը մէջ իրեն գիմելու սրտակեղէք
տեսարանէն, մատները ժլէթին գրպանը խօ-
թելով՝ երկու տասնոց հանեց ու զատ զատ
դրաւ անոնց մինիսիկ ու ազատու ձեռքերուն
մէջ, ազդարարելով մի և նոյն ատեն որպէսզի
ալ մեկնին գիշերը չի յառաջացած :

Ուրախութեան ծայր աստիճանին մէջ եր-
կու պզտիկները առանց կենալու դուրս վա-
զեցին այդ founsonէն, փողոց ինկան, և
մութը կուտ տուաւ զիրենք իր քստմնելի ու
խորհրդաւոր ծոցին մէջ :

Եւ այն տեղը ուր նստած էին իրենք պահ
մը առաջ, երկու շուներ եկան կծկուելի,
ցուկնին սրունքներնուն մէջ խոթած :

* * *

Ճամբան սկսան խօսիլ քոյր-եղբայր :

— Ես մայրիկին հաց պիտի առնեմ, ըսաւ
աղջիկը, դո՛ւն ... :

— Ես ալ հաւտիդ մը, յարեց պզտիկը
թոթով լեզուաւ :

Եհնի-չէհրի փողոցին վարերը, շատ վա-
րերը, փլիլած հիւզակի մը պատուած կէս
վարագոյրներուն ետին իսարե մը կը պլպլար :
Անձամաչ դէմքով կին մը սենեկին անկիւնը
պատառատուն սեխի մը վրայ կծկուած ձեռ-
քը ծնոտին, պատուհանէն դուրս կը նայէր
անընդհատ :

Երկու պզտիկները հեւալէն եկան թը՛ք
թը՛ք պատուհանին զարնել :

Կինը դիւահարի մը պէս տեղէն ցատկել
ուզեց, գրկելու համար իր չափօրէնները, սա-
կայն մէջքէն վար սախտած ըլլալուն՝ սողա-
լով սողոսկելով գնաց բացաւ դուռը, ու եր-
կու հոգեհատորները վիզը պլլուեցան, մին՝
հացի շերտ մը, միւսն ալ հաւկիթ մը երկա-
րելով իրեն, անանկ ուրախութեամբ մը՝ որ
կարծես համադամներու պնակներ կերկարէին
իրենց մայրիկին :

Մայրական տաք արցունքներ թրջեցին
երկուքին ալ գանգուր մազերը, որոնք փո-
շիներու մէջ ալ կորսնցուցած էին իրենց գեղն
ու թարմութիւնը :

— Մայրիկ մինչեւ աս ատեն կեցանք,
տասնական պիկ առինք ուշախէն, ես հացիկ
առի քեզի, Պետիկն ալ հաւկիթ մը :

— Նա՛ մայիդ նա՛ հաւտիդ մը ...

— Աֆէրիմ մանչս, գիտէիր որ վաղը
Չատիկ է ...

— Չատիկը ի՞նչ է մայիդ ... հարցուց
փոքրիկը խոշոր խոշոր աչքերը բացած, խե-
լացի հետաքրքրութիւն մը ցոյց տալով :

— Մանչս, Չատիկը կարմիր հաւկիթ կը
բերէ քեզի պէս պզտիկներուն ...

— Էյ իմինս տայմիյ տէ նէ՛ ...

— Աստուած պապան անիկայ կը կար-
մըրցունէ մանչս, դուն ամէն ատեն Սատուած
պապան սիրէ, անիկայ քեզի կ'օրհնէ ուզա-
ծըդ կուտայ ...

Բունը ծանրացած էր պզտիկներու ար-
տեւանունքներուն յլրայ : Մայրիկը բերած
հացը կիսելով իր հոգեհատորներուն բաժնեց
ու անոնք հազիւ երկու պատառ կերած թէ
չէ, ինկան Մորբէոսի գիւղը, մինչ պզտիկը
բունին մէջ բերնի չոր հացը կը ծռոմծռնէր :

* * *

Չատիկի առաւօտուն, երբ Պետիկ աչ-
քերը բացաւ արշալոյսին հետ, բարձիկին
վրայ դուռ կարմիր հաւկիթ մը, կարմիր
հաւկիթ մը՝ որ հարուստին սեղանը զարդա-
րող կարմրած հաւկիթներէն չէր, այլ՝ մօրը
արցունքներովը ներկուած հաւկիթ մը :

ՆԿԱՐԻՉԸ

Պօլ պօլ ջարդողներուն

Ձուածեւ դէմքով, սեւ աչք-յօնքերով, տոգոյն այտերով, խոշոր ականջներով, ցրցուած ակուններով, թխագոյն չափազանց տըգեղ բարեկամ մը ունիմ Սարգիս անունով, որուն արտաքին չիքութեան նկարագրութիւնը ընելը «Հանրագիտակ»ի էջերուն մէջ, բաւական դժուար պիտի ըլլար, որովհետեւ եղական է, կրնամ ըսել:

Որչափ մեծ մեծ ջարդողներէ, ինքնագով ու եսասէր կակոններէ չեմ ակոխիր, այնքան դէմս կ'ելլեն ատոնք, կարծես զիս ա'լ աւելի նեղացնելու, ջիղերս ա'լ աւելի ոտք հանելու, ինծի գրգռելու համար:

Յիշեալ բարեկամս ինքնագովութեան լըպիրշ և ամէնատեսակի'օրէն պոգալի համաճարակ ակտին անպատկառ ճիրաններէն կաշկանդուած՝ առտու իրիկուն իրեն՝ իր ընկերակիցներէն գերադաս ըլլալուն, իրեն պէս արտասովոր Դիմ մը ոչ մէկ տեղ գոյութիւն ունենալուն, ինքզինքը բարձրացնելուն, իր արուեստին մէջ — նկարչութիւն էր արուեստը — անդուգական մը ըլլալուն վրայ կը ճառէր. ա'յն աստիճան որ պառաւ ճատալողներուն տեղը դրած էինք զինքը իր չափազանց շատախօսութեանը համար:

Զինք ճանչցողներուն ամէնքն ալ զգուած էին անկէ, անա'նկ որ երբ մէկ քանի ընկերներ տեղ մը հաւաքուած՝ իրարու հետ խօսած ժամանակնին, տեսնային թէ Սարգիսը դէպի իրենց կուգայ, կամացուկ մը, առանց յայտնի ընելու, կը բաժնուէին իրարմէ, որպէս զի քովերնին գալով կեկեղեցութեան չսկսի դարձեալ: Մէկ խօսքով գտնած էին անկէ, չէին ուզեր, բացարձակ կերպով տեսնուիլ անոր հետ, շատախօսութենէն զատ եւափրեկանութեան, սայղըսըգութեան հիւանդութիւններէն եւս վարակուած ըլլալուն:

Եւ կը վարմանամ — ինչպէս դուք ալ պիտի զարմանաք —, երբ յայտնեմ թէ այնքան նողկալի, պոգալի, գանեցուցիչ յատկութիւններ ունեցող այս բարեկամս իր տըրամադրութեանը տակ ունէր գեղեցիկ — որքան որ կարելի է ըլլալ —, հրապուրիչ

— սուրբերն անգամ փորձութեան ենթարկելու չափ — և վայելչագէտ աղջիկ մը՝ Նուշիկ անունով, որուն համար հոգին կուտար և եթէ չեմ սխալիր, փոխադարձաբար իր ըսածէն դատելով:

Շատախօս ու մի և նոյն ատեն թուլ բերան մը ըլլալով, ամէնուն յայտնած էր թէ Նուշիկ անունով աղջկան մը հետ սիրահարութիւն կ'ընէ, թէ ամէն իրիկուն անսրտաճառ պէտք է խօսի անոր հետ, թէ շաքաթը մասնաւորաբար, երկու երեք օր մերթ թողալու անհրաժեշտութիւն ու մերթ ալ կաթնավաճառ Եռուտանին rendez-vous կուտան, թէ սանկ, թէ նանկ, թէ տասնըհինգ օրը անգամ մը Ղալաթիա պողպատին կը գտնուին, թէ աղջիկը խնդենալու աստիճան կը սիրէ զինքը և ինքըն ալ գայն, ու կարգ մը ատենց նման բաներ որոնք վարժուած ըլլալով լսել ամէն օր, ամէն վայրկեան վզըլթը կուգային մեզի:

Բարեկամս այս առաւելութիւնները, իր արտաքին չիքութիւնը, գրպանին միշտ լեցունութիւնը, վարած պերճ կեանքը տեսնելով կ'ուզէինք, կը հետաքրքրուէինք իր ներքին կեանքը հասկնալ: Արդեօք ինքզինքը գովածին չափ կա՞ր, արուեստին մէջ անդուգական մըն էր իրօք թէ ոչնչութիւն մը. սակայն ինչպէս: Ուղղակի իրեն հարցնելը պատշաճութեան, կենցաղագիտութեան դէմ չպիտի' ըլլար:

Երկար փնտռուքներէ վերջ միայն ստուգեցինք թէ, իրաւցնէ ոչնչութիւն մը, չգիտցած, չհասկցած մէկ լանը գիացող, հասկըցող ձեւացող կեղծ տիպար մըն էր, թէ իր այդ ոչնչութեան մէջ հազիւ մէծիւ մը շաքաթական կ'առնէր ու ան ալ ո'չ կանոնաւորաբար: Ուրեմն ինչպէս չիք էր, դրպանը լեցուն էր, պիտի հարցնէք: Շատ դիւրին է պատասխանը տալը:

Եթէ «Հանրագիտակ»ը կարդացողներ «Մասիս»ը եւս կը կարդան, թող բանա'ն գրական այդ շաքաթաթերթին 14րդ թիւը և ուշի ուշով կարդան յարգելի բարեկամս Ենովք Արմէնի «Վաւա»ը, պիտի հասկնան թէ, ինչ էր նկարիչ բարեկամս չիքութեան, գրպանին լեցունութեանը լո'ւն պատճառը: Այսչափ մը հասկնալնէդ վերջ, հիմա գանք

բուն աղտոտութեանը այդ տղուն որ, ապա-
գային իրեն շատ մեծ վտանգ սպառնացող
այդ մոլորութեան ճամբուն մէջ կը դեգերի
անամօթաբար:

Անցեալ օր զարձեալ րանտէվու կուտայ
Սըլանտիտ ուրիշ աղջկան մը, ժամը ճիշդ
7ին հոն գտնուելու պայմանաւ:

Եւ որովհետեւ գործի տէր մէկն է, իր
շարժողութիւն թէ ինչ կուզէք ըսէք, ժամը
մինչեւ վեցը երեք քառորդ ու եօթը վայր-
կեան անցած կը ստիպուի խանութը մնալ
կարեւոր գործով մը զբաղելու համար:

Թըք, թըք, թըք, ժամը եօթը կը զարնէ
և դեռ պոյալը ձեռքը կը լուայ, մինչ անդին
աղջիկը կը սպասէ . . . :

Եօթուկէսին շնչապառ հազիւ թէ տուն
կը հասնի:

Տասը վայրկեանի մէջ ակում օրերու պահ-
ուած զգեստները հագնելով դուրս կ'ելլէ
տունէն ու թռամվայ մը ցատկելով չիտակ
Սըլանտիտ կը փութայ:

Դուռը բանալով ներս մտած ժամանակ
քահքահ մըն է ծայր կուտայ հոն գտնուող-
ներուն կողմէ:

— Բիււհ, ինչ կայ որ արդեօք կը խըն-
դան, ինչ պատահեցաւ կ'ըսէ ինքնիրեն:

Ներկաներուն ամէնքն ալ ուշադրութիւն-
նին անոր յառած են: Տասնըչորս աչքով կը
փնտռէ իր սիրականը՝ Լիւսին. բայց չկայ,
ո՛ւր գնաց, արդեօք խաբէց զինքը: Վեր-
ջապէս աչքին կը զարնէ, անկիւն մը նստած
աղջիկը զինքը կը դիտէր խնդալէն ճաթե-
լով: Բովը կը մօտենայ. բայց դարձեալ ան-
տարբեր է աղջիկը, կը խնդայ ու միշտ կը
խնդայ:

— Ինչո՞ւ կը խնդաս, Լիւսին . . . :

— Ինչո՞ւ չխնդամ, քեզի պէս մունտար
աղու հետ չեմ ուզեր խօսիլ. թէ ինքզինքդ
և թէ զիս խայտառակ ըրիր, անամօթ:

Ու մեր Սարգիսը վերջէն կ'անդրադառ-
նայ իրողութեան. տասը վայրկեանի մէջ հագ-
ուած միջոցին մոռցած էր շապիկին ճօթը
ներս դնելու. գոնէ աղտոտ ալ չըլլար:

Բերա

ՍԵՊՏԻՄ. ԱՎՈՒՆԻ



ՔԵՐՈՎԲԻԿ ԱՂԱՆ

ԵՒ

ԻՐ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

(Շար.)

Երկու երեք տարիներու անցքէն վերջի-
էր, երբ օր մը Քերովբիկ աղան խիստ մը-
տածկոտ սեղանին առջեւ նստած խորասոյգ
վիճակի մէջ մտամբիփ կը թղթատէր հսկայ
տոմարները, իւր պարտատէրներու անուն-
ները աչքէ անցնելու ժամանակ էր, երբ ան-
միջապէս կանգ առաւ ցանկին առջեւ, որու
միջոցաւ տոմարին մէջ գտաւ իւր սրտնե-
ղութեամբ փնտռած անունին հաշիւներու ե-
րեսը, որու վրայ կառչած էր կլորիկ դու-
մար մը, օրուան սնանկացեալի մը փէշէն
կախուած:

Իւր սրտնեղ այս անտանելի վիճակին մէջ
կրկնակի գլանիկներու սպառումը եկած էին
քիչ մը սփոփել այս սատանայակալ կծծին,
որ այս անակնկալ տուժումին տակ բարկու-
թեանէն ամբողջ կըքով խօլաբար կը հայհոյէր
իւր պաշտօնէից, առանց նկատի առնելու ա-
նոնց արժանապատուութիւնը:

Նոյն միջոցին էր, իրաց այս արգահատելի
տխուր վիճակին մէջ սենեակին դուռը կը
բացուի, սեմէն ներս ծանրաքայլ առաջ-
նորդուելով սիգածեմ քալուածքով մը դէպի
Քերովբիկ աղային, որ այս վերջինը բոլորո-
վին հրապուրուած անկոյ հիւրին հմայիչ ու
դիւթիչ կարմորակ մսէ թերթիկներէն,
վայրկենապէս փոխելով իւր խոժու դէմքը,
սա՛նկ փաղաքիչ խօսքերով մը իւր նազելի
հիւրը աթոռի մը վրայ կը հրամցունէ:

Սովորական բանաձեւը միշտ, միշտ նոյն
յանկերգը, ինչպէս էք, օդերը գոհացուցիչ
չեն եւլն. եւլն. որու յաջորդող լուծիւնէն
Եւայի այդ չքնաղ թոռնուհին բոլորովին
զգուած, աճաբարբի դերով մը կը խղէ շա-
րունակելու համար իւր խօսքը:

Գիտե՛ս, Քերովբիկ աղա, թէ ինչո՞ւ ե-
կայ մինչեւ հո՛ս:

Մարդուկը պիչ պիչ աչքերը բացած ար-
համարհական շեշտով մը կարծես ըսել կուզէ
թէ, ինչո՞ւս պէտք, ես հիմա զբաղեալ եմ
իմ այսօրուան խոշոր վնասով:

Բայց որովհետեւ, փինները անանկ բաներ կը հասկնան:

— Ինծի նայէ՛ Գերովրէի աղաս, ասանկ խանի մը անկիւնը քաշուած առանձին ապրելով ինչ պիտի լինի, փառք Աստուծոյ, այսօր զէնկիւններուն պիտի ճիկնես ես, հէլէ՛ քեզի համար ըսես նէ ամէնքն ալ անանկ կըսեն կոր քի ճէվահիրներուն զիւմբիւսն ես, է՛հ, կարծեմ հասկցար ինչո՞ւ հոս գալս հը՛ր:

— Ինչ հասկընամ տիկին, ես այսօր հաց պիլէ չկրցայ ուտել, 400-500 ոսկւոյ վնաս մը պիտի ունենամ, քիչ մնաց թէրիէս եմսկ պիտի գար:

— Հոգիդ ողջ ըլլայ աղաս, դրամները դուն չահեցար, նորէն կը չահես, մէրազ մի ընէր, նայէ ինչպէս ամէն բան ոտքով կուգայ, հիմա սանկ կընիկ մը, զոքանչ մը, մի քանի պալտըղներ ունենայիր, հիչ մէրազ չը պիտի գար վրադ, անոնք շուրջդ շաքա շէլլաւ ըսելով քեզի ավընտըրմիչ պիտի ընէին, աղաս: Հէ՛մ, հը՛ր, աղէկ միտքս ինկաւ, ինչ է քի շաքթու մէջ ամէն գիշերներ ատ՛ բօսթալին տունը թաշընմիչ կըլլաս կոր. անոր Մաքրիկ կ'ըսեն, մարդուն հէմ բարան կանոնէ հէմ տէ անոր կտուէն ի վար կը խնդայ:

— Օ՛ օ՛ օ՛, տիկին, շատ առաջ մի անցնիք խնդրեմ, այդ կինը պատուաւոր և համեստ, պարկեշտ կին մ'է, իմ հոն երթալս ուրիշ նպատակաւ չէ, բայց եթէ աչկերտիս տունն է, և զանոնք սիրելուս համար ...:

— Քերովրէի աղաս, ես ձեզի բարիք մը նեղու համար մինչեւ հոս եկայ, իմ քրոջս էրիկը որ այս խանին մէջ Բ... վաճառատան պաշտօնեաներէն է, միշտ իրիկունները ձեր խօսքը կ'ընէ գովասանքներ շուայելով, ես երբ լսեցի թէ դուք Մաքրիկին ճանկերէն բռնուեր էք, շատ մեղքըցայ, եկայ որ ձեզի ցոյց տալու ձեր խարուած ըլլալը, ապա թէ ոչ իմ ինչո՞ւս պէտք, չամաչըրըս թէքնէին մէջ ձգեցի տէ հոս եկայ, ըսելով քի «պէօյիք Ֆամիլեա իշլերի կեհիֆիսիւհէսէն էյիֆ չըգմազ»:

— Լա՛ւ, լա՛ւ, տիկին, շատ գոհ մնացի ձեր ազնուութենէն, բայց ի՛նչ օգուտ որ չեմ կարող ամուսնանալ, մէկ կողմանէ տարիքիս մեծութիւնը, միւս կողմանէ բնաւորութեանս

ճահիւութիւնը արգելքներ կը յարուցանեն՝ այդ ձեր առաջարկներուն:

— Հա՛, հա՛, հա՛, Գերովրէի աղա, տարիքիդ մեծութեանը վրայ մէրազ կընես կոր, պօշ բան, նայէ մենք ինչ բանի մէրազը ենք օրինաւոր ամուսնութեան պարագային,

վար իյիսին գարբնա

Պին կեօֆսիւմին քազ օրասընա,

հէմ տէ քի, բնաւորութիւն ըսածդ ալ քիչ մը ճահիլ ըլլաւ է, վաղը միւս օր 20նոց մինեոն մը, սանկ շնորքով ֆօֆօս մը պիտի առնենք քեզի, հէլպէթ քի կէնճ է ամէն բան պիտի ուզէ, ամէն բան պիտի ընէ, եթէ բնաւորութիւնդ ճահիլ չըլլայ նէ, այն ատեն ամէն օր կռիւ, շատերու պէս ալէմ ուզիլի, դուն թամ իմ ուզած էրիկմարդն ես, թամամ էրքէք թապիթը, ցէ մուքլու օ գրգա քի սեհին կիպի պիւր գօնասը օլանազ ...:

— Ըսել է քի տիկին, ինծի կ'առնեն հա՛, հիմաճուկուան աղջիկներէն սանկ պօշու պիլիմի, էտալը կիւզէլ մը ըլլալու պայմանաւ:

— Նէ տէյօրսըն Գերովրէի աղա, սէն, հիմակուան աղջիկներուն բարա օլմալը պաշքա եօզ, սարխօշ, հասթա, ինթիյար նէ օլաճազ, իլլէ բարա օլմալը:

— Ըսել է քի տիկին, ուզածիս պէս աղջիկ մը կընամ գտնալ, ալ ատ ընտրութիւնն ալ ձեզի կը թողում, քանի որ հոս ոչ ծանօթ ունիմ և ոչ ալ ազգական:

(Շարունակելի)

ԵՐՈՒԱՆԴ

ԱՐԵՒԵԼԷ

Օրաթերթ Ազգային, գրական և քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան՝ Կ. Պոլսոյ համար 80 զրշ. գաւառներու համար 108 զրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանսօ փողոց: ԱՐԵՒԵԼԷ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամաւալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ՄՈՒՇՏԱԿԱԻՈՐ ՄԱՅԻՍԸ

Իւսահլը Զօլման

Մուշակլը կերան

Ողջոյն քեզ Մայիս և ողջոյն ձեզ ով քերթողք և քեռքողք գրական պարտեզին, զոր մանկապարտեզ դարձուցիք... ողջոյն ձեզ: Ողջոյն ձեզ ով քոջէ հիւսելու պէս մասններու վրայ ոտք համրելով յոյսը կոյսին, խոյսն ալ բոյսին քեռ կապ ընողներ: Ողջոյն ձեզ ով տաղաչափներ անգուգական, դուք որ Բերայի թռթռուռները աւելի ճարտարութեն կը չափէք՝ քան ոտանաւորի մը տոտոխները: Ողջոյն ձեզ ով քնարերգակքդ պանծալի, դուք որ մի լիզմօնիս մը և կամ Իւսկիւսարա կիսերէն մը աւելի անուշ կ'երգէք քան թէ սոխակին դայլայլին և առուակին կարկաչին նկարագրականը: Ողջոյն ձեզ ով բանաստեղծքդ անմրցելի, դուք որ սեղանաւոր մը և կամ կոշկակար մը գետինը դարնելու հնարքները աւելի դիւրին կըստեղծէք քան թէ տալեր ու տողեր գեղահիւս: Ողջոյն ձեզ ով հովիւք և հովուերգուք սխրալի, դուք որ խասապ Կարապետ աղային գառնապաք խըվըռճըրները արածելու մէջ աւելի յարմարութիւն ունիք քան թէ Վերդիլի, Հոմերի հետեւողութեան մէջ: Վերջապէս ողջոյն ձեզ և ձեզ նմաններուն, ողջոյն գարնան, ողջոյն մայիսին, որ եկաւ սերմայի մը դնել ձեզ որպէս զի գործի սկսիք, ձեր յորանջելու ժամերը փրկել և փոխանակ զձեզ պամ պարապ պտըտցնելու, պամ-պարակ ընել զբաղումներու և յոգնութիւններու երեսէն: Այլ հիմա ճակատաբաց կրնաք երեսը անգամ նայելու քաշուած մէկ հարուստ օրորդնուղ ձեռքը խնդրել, Պօթեռին քօթթիւմ ապսպրել, Պիւռկիէն կոչիկ հագնիլ, չաբաթը չորս անգամ ածիւղիլ, մաղերնիդ՝ որ ասկէ առաջ խենդ Միսաքը կը յիշեցնէր իր խառախոնձօղ երեւոյթովը, հիմա կըրնաք քօղալա եղիով տիւպիւլպանտօ չինել ականջնուդ երկու կողմէն վեր առած, գըրպաններ որ նախապէս մէթալիկի երես տեսած չունէին, հիմա Քամչաթքաի պանքային

մէկ մասնաճիւղը կրնաք ներկայացնել, փայլիլ ու փայլեցնել ձեր ընդոծին (°) տաղանդը, յարգել ու յարգուիլ, սիրել ու սիրուիլ, ծեծել ու ծեծուիլ, վերջապէս, նշանուիլ, կարգուիլ և ըմբոշխնել բնութեան և մարդկութեան այն բոլոր հաճոյքներն ու քմահաճոյքները որ իրեն հետ կը բերէ ՄԱՅԻՍԸ:

Բայց չեմ գիտեր ինչո՞ւ կը մտիմ՝ երբ այս տողերը կը գրեմ, արիւնս կը ցամքի կարծես երակներուս մէջ, պաղ սարսուռ մը կը ցնցէ մարմինս և ինքզինքս կզգամ Հիւսիւսային բեւեռին այն անծանօթ վայրերուն մէջ, ուր մարդիկ կը բաղձան ոտք դնել ու չին կըրնար:

Թերեւս ընթերցողներէն ոմանք հարցնեն թէ ինչո՞ւ արդեօք այս տարուան Մայիսը շատ ցուրտ ու պաղ entrée մը ըրաւ՝ հակառակ իր զուարթ ու տաք բնոյթին:

Առանց օգերեւութաբան մը ըլլալու և կամ Քամիլ Ֆլամառիօնին հետ սուրճ մը անգամ խմած ըլլալու, պարզապէս և առանց քաշուելու կրնամ ըսել թէ պատճառը 1906-1907ի նորեկուկ բանաստեղծաձգերուն ազդեցութիւնն էր որ իրենց սառեցուցիչ հովուերգութիւններով, տաղերով և ոտանաւորներով սառեցուցին անուշիկ Մայիսին:

* * *

Իրիկուն մը ծանօթ բարեկամներէս մին զիս տուն հրաւիրած էր:

Սովորութիւն մը ունիմ, բարի կամ չար չեմ գիտեր, քիլլալ կնկան պէս շատ տունէ տուն բեռաթիւն չեմ սիրեր, բայց գոհացում տալու համար ընկերոջս փափաքին, գացի:

Սենեակը որ լեցուն էր սիկառի ծուխով, ինչպէս նաեւ խմողներու չեթիս չեթիս բազմութեամբ մը, տանուտէր բարեկամս զիս ներկայացուց Հանրագիտակը յիշելով:

Կիները կարմրեցան, ճերմկեցան և անոնցմէ մին որ մոռարմիշ ըլլալուն բան մը չէր մնացած յարեց. «տօլմային բանաստեղծը...»:

Ես առաջին անգամ այդ խրդ խուռուսիքն տեղիկացայ թէ տօլման ալ իր բանաստեղծութիւնը ունի եղեր:

«Տօլմայի բանաստեղծ», այսինքն մէկը որ տօլմային վրայ կը գրէ և կը կըլեցնէ ճաշածուկներու այն դասակարգին որուն échantillon sans valeur ըլլալու պատիւը ունէր, անշուշտ այդ ալախմը սեմա մազը օրիորդը — օրիորդ ըլլալը վզեն կապած սիւ խաշիֆէ թասմայէն ճանչցայ —:

Եւ՝ քանի որ Մայիս և տօլմա զոյգ մը ջուրի կաթիլներու պէս սերտ նմանութիւն ունին իրարու հետ, ուստի ներեցէք որ ես ալ իմ տօլմաս երգեմ և նկարագրեմ ձեզ մայիսի առաւօտը, կաթը, տօլման և ամէն այն քաջքոտուկիք պարագաները, որոնք տեղի ունեցան երեքշաբթի առաւօտ և մինչեւ իրիկուն:

Ամէն աքըր իր միջավայրը ունի կրսն (հոս աղբիւսը քիչ մը պիտի խըտխտացնէր արժանապատուութիւնս) ուստի, ես մեղաւորս ալ պիտի ճառեմ ... յիւսկիւտարէ:

Սայլանկէօզները անձրեւին՝ իսկ կիները արեւին դուրս ելլալ կը սիրեն, ահա այս պատճառաւ էր որ Մայիս մէկի առաւօտուն արեւը քունէն շատ կանուխ արթնալով եկաւ գգուել Սկիւտարցուհիներու եռոյի բոսնալը (տեղական փոշի) դէմքերը:

Զմեռուն ցուրտէն թմրած ծերերէն մինչեւ ոտնայալախ (նոր բառ) բուքները դուրս նետուած էին, տօնելու համար այն մեծ տօնը, որ կանուխի կաքակերաց, ինչպէս բազարձակերաց եւայլն:

Սամաթիա, Գում-գարու (ուշադրութիւն Պր. Գրաշար Գ. պիտի ըլլայ) իրենց պօտանները ունին, Բերան՝ իր պարտէզները, Գուռու-չէչմէյէն վեր՝ Պէպէքի պարտէզը, Մագրի-գիւղ իր դաշտերը, Իզմիտ՝ իր Շիշլին, Խաս-գիւղ՝ իր Բեաղըտ-խանէն և Սկիւտարն ալ իր կազինօները և Խօռուլուխը:

Մինչեւ հիմա գիտէինք որ Մայիս մէկի տօնը միայն կիներուն և պարտիզպաններուն յատուկ էր, բայց այս տարի անձամբ և աչօք հաստատեցի որ շուկացի աղաներն ալ կը բռնեն եղեր բնութեան այս մի օրը ... Թերեւս իրենց կնիկներուն հաճելի ըլլալու համար:

Երեւակայեցէք ընդարձակ դալարագեղ վայր մը, ձիերուն բերնի ջուրերը վաղցնելու աստիճան թարմ ու կանանչ, և ատոնց վրայ մագի թունճուկի պէս թուրթամ թուրթամ կիներ, օրիորդներ գոյնզգոյն թուալէթներով, բնական ծաղիկներու պէս, աղուոր չիւքին, հրեշտականման, հրեշանման, նիհար, էլէնիին քար հանելու չափ դեր, և ասոնց մօտ ա ջոջ այրեր, ամուսիններ, միւսիւններ, հալայի թէյզէի տղաք բոլորը քոյր եղբօր պէս քիթ քիթի ... բերան բերնի:

Խաղողը խաղողին նայելով կը սենայ կըսէ առածը, Մայիսճիներն ալ կանանչին նայելով կսկսին կանանչնալ այն աստիճան որ երեկոյեան դէմ կը դեղնին, կը մարմրին այնքան խավուումիւ կըլան իրարու հանդէպ:

Նիւթը աւելի մանրամասնօրէն ներկայացնելու համար սկսինք գծել այն պատկերները որոնցմով ընթերցողը պիտի կրնայ գաղափար մը կազմել Մայիսի առաւօտեան խրախճանութեանց նկատմամբ:

Առաւօտուն կանուխ, դեռ արեւը չի ծագած, Սիոս աղայի դուռը կը զարնեն երկու չիք երիտասարդներ, ակնոց ի քիթին, մէկ մէկ պզտիկ ծաղիկփունջ բռնած՝ համակ լիւրա, վերէն սկուֆան գլուխը Սիոս աղա պատահան բանալով,

— Ի՞նչ է ան, մենք կաթը առջի իրիկունէն առինք ...

— Մենք կաթնավաճառ չենք Սիոսիկ աղաս, մենք ենք մենք, շնորհաւոր Մայիս ...

— Հա՛ ... Ասծուբարին, ես գիտէի քի մինակ Զատիկի Ծնունդի կը պտըտին տէյի, Մայիսը հիչ միտքէս չէր ամենէր կոր ...

Նոյն պահուն Սիոս աղայի երկու հասուկ օրիորդները, որոնք արդէն հագուելու զբաղած էին՝ պատուհան վաղելով,

— Օ՛ ... միւսիւ էտմօնը, միւսիւ Սիրաքը ...

— Համմէ՞ ... կըսէ հայրը աչքերը բացած, ի՞նչ եղաք սընըրնի՞դ բռնեց քա ...

— Իշտէ հայրիկ միւսիւնները եկեր էն քի մէկտեղ Մայիս ընենք տէյի ... կեցիր մամային ըսենք, հայտէ հայրիկ դուն ալ հագուէ ...

— Քա աղջիկ, տահա պզտիկութանսդ ձեզի տնտես աղբարով դպրոց չեմ ղրկած,

աս կը նայիմ կոր քի չիֆթէ չիֆթէ տնտես-
ներ բէյտաւ էք ըրեր ...

— Սոս հայրիկ, միւսիւ Էտմօնն է, միւ-
սիւ Սիրաքը ...

— Որ խառնախօսին ըլլայ նէ ըլլայ, առ-
տուն կանուխ էլ ալէմին դուռը ծառք առ-
նելը ինչ պիտի ըլլայ ...

— Ես մալիւմաթ ունիմ ... ունիմ, ը-
սելով տիկինը ներս կը մտնայ, մէկ կողմէն
Ֆեռմ-միւրերը դնելով, ինչ կըլլաս կոր ...

— Օ՛ ... քուկին մալիւմաթըն է նէ ես
քեզ մեղայ ... վեր հրամայուցէք, վեր ...

Օրիորդները արդէն հագուած, վար կը
վազեն և դուռը բանալով,

— Օ՛ ... հրամայեցէք ... պաւփօ չի-
տակը պաւփօ, ասանկ կանուխ գալերնիդ
չէինք յուսար ...

— Գարնան ամսոյն տալ բարեւ, մարդ է
կրկնել ան արեւ ...

— Համակ բանաստեղծութիւն ... չի-
տակը շնորհաւորելի է ... Էյ հրամայեցէք,
քիչ մը չէ՞ք նստիր մինչեւ որ շտկուինք, մա-
ման ալ հայրիկն ալ ...

Միւսիւները երբ հայրիկին անունը կը
լսեն՝ դէմքերնին լացի գիշեր կը դառնայ,
սակայն առանց յայտնի ընելու,

— Շատ լաւ, ամենայն սիրով, օրիորդ-
մենք, մէկ քանի հատ մառկութիւն ժողովելով
զըաղինք, մինչեւ որ պատրաստուիք ...

— Ինչպէս որ կուզէք ... հի՛ հի՛ հի՛ ...
ընելով օրիորդները կը մեկնին, մինչ վերը
տիկինը Սիոս աղային կը հարցնէ ...

— Ինչ ըռէնկ հագնիմ Սիոս աղա, ինչ
ֆիստան կուզես քի կոնակս անցունեմ ...

— Ինծի մնայ նէ խըզը ալ հագիր, չիւն-
քիւ ինծի անանկ կուգայ քի կաս կապուտ
ըլլալիք մէսէլէներ պիտի ըլլայ, պարէ ֆիս-
տանին ըռէնկը երեսին է զարկեր ըսէ տես-
նողը ...

— Աման դուն ալ, տահա բան կայ նէ ի-
ճատ ըրէ, փառք Աստուծոյ կարմրելու ճեր-
մըկելու ինչ ունինք ...

— Հիմա չիգայ ամա քիչ մը ետքը քեզի
կը գուրցեմ ..., մինչեւ հիմա գիտէի քի
էրքէքսիդ մէրաս բայ օլմազ, ֆախաթ մէյէր
տահան կայ եղէր, էրքէքսիդ Մայիս էթմէք
տէ օլմազ ըմըլ ...

— Ա՛տ ինչ խօսք է ...

— Պիլմէճէ չեմ ըսեր կոր կընիկ, խեղդ-
կոխդ առ, վարի զիւպպէնրը ինչ տէյի
տալէթ էք ըրեր ...

— Բա վայ մեղքիս, միւսիւ Էտմօնը ի-
լէն միւսիւ Սիրաքն են ...

— Հա, սա ուր է առջի կընիկէս մնա-
ցած զաւակներս ... հա՛, անոնք են նէ զա-
րար չունի ...

— Էյ ալթըն ճըպըպըգ, զավալը չօ-
ճուխները թող երթան հետերնիս գան, ըսեն
խնդան վախիթ անցունեն ...

— Ես չէի ըսողը, կուզես նէ ժամկոչը
զրկէ տէ տէլիխանը թօփ ընէ, նայէ քեզի
ըսեմ, պղտիկ պիչիմսիդութիւն մը տեսնալու
ըլլամ նէ՛ սատկած ֆիւսի պէս պաճախնուն
բռնելուս պէս ֆուլթմիշ կընիմ ...

— Պօշ լաֆերը ձգէ տէ ելիր հագուէ,
արեւը ճըզըր ճըզըր ելաւ, մենք տահա դուրս
պիտի իյնանք ...

Քիչ մը վերջը բոլորը մէկ պատրաստուած,
տունէն կը մեկնին, մինչ երիտասարդները
Սիոս աղայի սիրտը շահելու համար մօտէն
քաշելով կը խօսակցին,

— Բնութեան էն չքնաղ ամիսը որ է
Մայիսը, ինչ անուշ է ծծել, և ըմբոշխնել
անոր թարմութիւնը, նամանաւանդ երբ սո-
խալն ալ իր դայալը կը բերէ խառնել և ...

— Ատ ըսածներդ պարզեւարաշխութեան
օրէն միտքդ մնացեր է միւսիւ ... ինչ եմ
կըսէ, ինչ ըսել կուզես կոր ...

— Այո՛, այսինքն քանի քաղցր է Մա-
յիսը իր կանանչներով, նորաբողբոջ ծաղիկ-
ներով, կարծես բնութիւնը նոր կարթննայ
օրօրոցէն կաթնաթոյր մանկիկի մը պէս ...

— Հայտէ օղլում զէվքդ առ տէ պաշ-
խասին դէմը մայթապի ելիր ... տահա ի-
քինծի խախվէն չի խմած ճառ մտիկ ընելու
պէյին չունիմ ...

— Հայրիկ, միւսիւ Սիրաքը քեզի բա-
նաստեղծօրէն կը խօսի կոր ան է ...

— Աղջիկ իմ գիտնալս Մայիսին կաթի,
սիւլիկի, ֆէնտուզայի վրայ կը խօսին, ա-
սոր ըսածներուն մէջ առ երեքէն հիշ մէկը
չիգայ ...

— Դուն չես հասկնար ամա, մենք կը
հասկնանք հայրիկ ...

— Դուք ալ չի հասկնայիք նէ աղեկ կըլար ... , նայէ Ուսկուկն ալ չի հասկնար կոր ...

— Ատ ո՞վ ըսաւ, աղջիկներս կը հասկընան կոր եա, ինծի ան պէտք է, դուք հայտէ թեւ թեւի մոէք տէ աղուոր աղուոր խորաթուեցէք եավրում, մենք ալ ետեւնուդ կուգանք կոր ...

— Տուներուն բէնճիւրէին իլէն բերողներուն ետեւէն ալ կը խորաթուկն կոր կընիկ, ինծի կուգայ քի պէրպէրին խապար պիտի ընեմ քի դայ տէ սիւլիւկ փակցունէ քեզի, արունդ բէք ճէվէլան կընէ կոր ...

— Ինչո՞ւ ...

— Հապա աս եապանճի ճահիւնները թեւ թեւի տեսնան նէ ի՞նչ խտեա բէյտահ կընեն մեր վրայ ...

— Խտեա է միտեա է թող հասկընան տէ, քէօնայիք աչքերնին տեսնայ քի, Ուսկուկին աղջիկները տունը մնացող չեն, մէյմէկ հատ ունին տէյի ...

— Կընիկ, ունին ամա, ունեցածնին, մէյմէկ բուլանթի թէք քար չէ քի պարծենաս, օնիքիսի քուռուշա զիւպպէներ ...

— Թող ըլլայ, հէրիք է քի կէնճ ու կանանչ տէլիսանլըներ են, բէք չըլլայ նէ տուն փետայ կառնեմ, դուն ալ խանութը գործ մը կուտաս կըլլայ կերթայ, հէմէն ամէն աղջիկ կարգողը կը հանէ տէ Ալեօնին տղուն չի տար կոր եա ... իշտէ կը տեսնանք կոր ...

— Եա՛ ... անանկ է ... , հայտէ աղջիկներ յոգնեցաք նէ դուք միւսիւնները առէք տուն դառցէք, մենք ալ երկու սահաթէն կուգանք, կուղէք նէ տէր պապային ալ ըսէք ան ալ սուռջառը առնէ թող դայ... պարէ մայիս մայիս կըսենք կոր նէ ուրու թալը կարնապուր մը ուտենք տէ, դուն ալ կընիկ համը նայիս :

* * *

Դալարագեղ մարգագետնին մէկ անկիւնը զոյգ մը երկսեռ հօբպիլիպիմպօմներ բարաթեա մը բռնած կը խօսակցին :

— Սուտ ես սուտ, հիմա ապրիմ-մեռնիմ պիտի քաշեմ նայինք իրաւ ես ...

— Երկու աչքս քէօնայ քի կը սիրեմ կոր Սուրբիկ, խաչ վկայ կը սիրեմ կոր ...

— Էյ կահնէ նայի՛ք, նա կը պաշլայեմ կոր, կը սիրէ, չատ, քիչ, խենդենալու աստիճան, ամենեւին, կը սիրէ չատ, քիչ, խենդենալու աստիճան, ամենեւին, կը սիրէ չատ, քիչ, խենդենալու աստիճան...ճ...ա...ն...

— Չըլլար, չըլլար, սուտ կըսէ կոր ատ չիլէկը, նա նայէ, ծառքէ կէօքսիւս դիր, գիտես քի առապաներ կը պտըտին կոր մէջը ...

— Իշտէ ան չես սիրեր կոր ան է, էկէր սիրէ՞ր նէ ...

— Ախ ... գանձնա գըռտըղմ թէճէլլիսի ... հիմա չե՞մ սիրեր կոր քա՛ ...

— Էյ ինչէ՞ն գիտնամ ...

— Կիւվէրճինս, էկէր չի սիրէի նէ, աս օր Ֆոէնկին պախճան պիտի երթայինք տէ չաղա պատեմ պիտի կողնայինք, օխան չորս զրուշի պիտի ծախէինք, թէրք ըրի ելայ եկայ քի խաթրդ խօշ ըլլայ տէյի ...

— Էյ աֆէրիմ ... սըտեղը նստինք տէ, կլոխդ ծունգիս դիր քիչ մը ըռահաթցիր, մինչեւ քի մարըս տօլմային համար չալըները ժողվէ նէ :

* * *

Եւ ... pour mot de կարճ կապել, թուեմ մէկ քանի զուարթ պատկերներ, որոնք մաս կը կազմեն մայիս մէկի յօդուածին :

Տեսայ օրիորդներ, որոնք բաց գոյն հագուստ հագած ըլլալուն գետնի կանանչին վրայ անզգուշութեամբ նստած ըլլալուն հետեւանօք թռանվայի ձիերը դարձած էին... կանանչ տամզալը :

Տիկիւններ՝ որոնք անզգուշութեամբ տօլմային տակը առնել տալով իրենց սուռու խօսակցութեամբ էրկինուն սիրտին տակը կառնէին :

Միւսիւններ՝ որոնք թուղթ մատիտ ի ձեռին ըսըռղան օքիին վրայ haute poésieներ կը շինէին, բէմպէ պատմալը օրիորդներէն ներշնչուած :

Ընտանքի հայրեր՝ որոնք բաներնին գործերնին ձգած, թեւերնին սոթթած, քաշը 10 զրուշի խուզի կը դարձնէին, որուն հօտէն մարմրող երկու-հոգովներ մէկ մէկ պընակ ի ձեռին միւս կը մուրային :

Չոյգ նշանածներ, որոնք թեւ թեւի կը

պտրտկէին կանանչներուն վրայ, իրենք ալ ազդուելով ու կանանչնալով ատեն ատեն:

Միսօներին ֆօռա տիկիներ, որոնք գետինը փռուած խտրներու վրայ ընկողմանած թոյլ կուտային դիտող աչքերու խորասոյգ ակնարկներ ձգել Բամշաթկայի խորերը:

Մուտածին սերը տանիքի սաչախներու պէս վար կախուող պիտեր:

Փալ պագաններ, որոնք իրենց բնական գեղեցկութեամբ շուք կուտային տգեղութեան տիպար խղ խուռուսիներու:

Մուշտակի և մահճակալներու ծածկոցներու մէջ փաթթուած պառաւներ, որոնց դէմքը ցուրտէն նեկկեառի գոյն մը առած էր:

Et patati et patata պիտի ըսէր Ալփիար, քանի որ վերջը չպիտի դայ արտառոցութեանց այս շարքին, սակայն ժամանակին ընթացքին մէջ տարիներ և տարիներ վերջը Մայիսի օր մը երբ ուղին գիտնալ թէ մինք ինչպէս տօնած ենք տարուան կոյս ամիսը, թերեւս ձեռք առնեն Հանրագիտակի հաւաքածոները և հոն կարդան այս տողերը, թէ ինչպէս նկարագրած է՝

ԼԻԼԱ

ԿԸ ԾԱՆՈՒՑԱՆԵՆՔ ԹԷ
ՄԵՐ հրատարակութիւններէն

ՓՆԶԱԿ

Գ. ՎԱՐԺՈՒԹԻԻՆ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ

ԵՒ

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒՆԶ

Անուն օգտաշատ դասագիրքերը

ՆՈՐԷՆ ՏՊՈՒՅՑԱՆ

և կը վաճառուին սովորական գիներով

ԵՒ թէ՛

Համառօտ Իրագիտութիւնն ալ

նորէն պիտի լոյս տեսնէ՝

Ուսումնական Խորհուրդէն վաւերացուած

Դիմել 47, Պապը-Ալի հասցեի

ՍՄԱՍՏ ԴԱԻԹԵԱՆ

ՊՈԶԱԻՈՐ ՍՈՒՏ ՄԸ

Թերեւս ժամու կնկան պէս ամբողջ Աւագ շարաթը Տաճարին մէջ չանցնելնիս էր պատճառ, որ Սկիւտարէն ոմն ոք Ս. Կարապետ եկեղեցւոյ երգեցողութիւնները բռնիքէ ըրած էր և մեզ հասցուցած, իբր Զաքարիայ լուր զորս հրատարակեցինք անցեալ շաբթուան կողմնակալութեամբ:

Այս պոչաւոր սուտը, որ պոչի ցաւէ յառաջ եկած ըլլալը ամբողջ թաղեցին կատու գէ, ներկայիս կուգանք յանուն Երեք միացեալ թաղերու բարեպաշտ ժողովրդեան ուղղել և վեր առնել ճշմարտութիւնը:

Եկեղեցւոյն Դպրաց դասը որ կը բաղկանայ կարողագոյն դպիրներէ, առաջնորդութեամբ իրենց փորձ և կարող պետին Երմոգ Էֆէնտիի, ընդհակառակը այս տարի ուրիշ տարիներէ աւելի սքանչելի և հեշտալուր երգեցողութիւնք երախտապարտ թողուցած են բոլոր թաղեցիները, վկայ՝ Իճատիէ և Սէլամաղի երկուս ժողովուրդը, որոնք երգեցողութեանց կանոնաւորութիւն մը վայելելու համար հեռաւոր թաղերէ եկած հետեւած են ամբողջ Աւագ օրերու ժամերգութեանց:

Խմբագրութիւնս շնորհաւորելով իր Դպրապետ-աշխատակից Երմոգ Էֆէնտին, որ իր քսան տարուան ժրպան աշխատութեամբ և ջանքերովը այսօր պարծանքը եղած է միաձայն երգեցողութեան, այն եղանակներով զոր մեր նախնիք ընտրած, ընդունած և յարգած են:

Ի Մ Ա Յ Է Ք . . .

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

ՊԻՏԻ ԵՐԵՒԻ

Ողբացեալ դերասանուհի՝

 ՏԻԿԻՆ ԱՐՈՒՍԵԱՅԻ

Երիտասարդութեան ասենին՝ այսինքն դերասանութեան ժամանակուան գեղեցիկ մեկ լուսանկարը, ինչպէս նաեւ խմբագրական ծանօթութիւններ եւ անեկթոններ իր կեանքէն:

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ ԱՄՊԵՐՈՒՆ ՄԷՋ

Կ. ՄԻՆԵՐԱՆԵՆԱՆԻՆ

Օր. Ատա, արդարեւ, Ամերիկոսիներուն ամէնէն անվարն է:

Բնութիւնը իրեն պարգեւած ֆիզիքական չնորհներուն հետ տուած էր նաեւ՝ յանդգնութիւն մը և աներկիւղութիւն մը ամէն փորձանքի դէմ:

Տամբլորս տարեկանին, կը մտնէր առիւծներու վանդակի մը մէջ, և կը խաղար անոնց կորիւններուն հետ... Գիշ ատենէն, կենդանիները սկսան զինքը տաղտկացնել, ձեռքը լիզել տալ առիւծին, առջիւժը՝ գետնէն տապալակել տալ, ասոնք ամէնքը հասարակ բաներ կը թուէին իրեն:

Ուստի, քսան տարեկանին, խենթ փափաք մը ունեցաւ, նետուելու օդին մէջ, ցանկալով հանդիպիլ անծանօթ բանի մը:

Օր. Ատա հրեշտակ մըն էր և զինքը պաշտողները, ամէն տեսակ ոտանաւորներով ու արծակով կը խօսէին իրեն հետ, բայց հակառակ հրեշտակ մը ըլլալուն, զոյգ մը թեւեր կը պակսէր իրեն՝ օդին մէջ բարձրանալու համար, ուստի, որոշեց՝ օդապարիկով ելլելու:

Գիշ ատենէն, Օր. Ատա, քաջ օդանաւոր մը եղաւ, անուանի՝ իր անիմանալի յանդգնութիւններովը: Ըսի որ, Օր. Ատաի քովէն չէր պակսէր պաշտողներու խումբ մը երբ ինք՝ կենդանիներ կը հնազանդեցնէր. ալ աւելի շատցան երբ օդին մէջ բարձրացաւ:

Իր շուրջը սլքտացողներուն մէջ, Արթիւր անունով մէկը կար որ՝ միւսներէն նուազ անտանելի էր:

— Պարոն Արթիւր, կերեւայ որ զիս կը սիրէք, ըսաւ անոր գեղանի աղջիկը, առանց յառաջարանի...

— Այո՛, ձեզ կը սիրեմ, պատասխանեց երիտասարդը, բայց ձեզ կը պաշտեմ, ձեր մէկ նշանին վրայ աշխարհիս միւս ծայրը պիտի երթամ...

— Շատ հեռու մ'երթա՛ք...

— Փորձի՛ ենթարկեցէք զիս...

— Այո՛...

— Այն ատեն, թոթովեց սիրահարը, թող կուտաք յուսալ որ...

— Աս վայրկեանէս սկսեալ, ձեզի իմ նըշանածս կը նկատեմ...

Երջանիկ Արթիւր ծունկի չոգեցաւ՝ պաշտելի աղջկանը ոտքերուն առջիւ, չգտնելով խօսք մը՝ սրով իր ուրախութիւնը յայտնէր:

— Մինակ, աւելցուց Օր. Ատա, պայման մը կ'առաջարկեմ...

— Տաւր, եթէ կուզէք...

— Ո՛չ, մէկ հատը կը բաւէ, ինծի մտիկ ըրէ՛. Ֆրանսայի մէջ առած մը ունիք կարծեմ, որ կ'ըսէ. ամէն մարդուն հաճոյք դրոշներուն տեղը կայ, ուրեմն, ես ալ հաճոյք մը կ'զգամ օդին մէջ ապրելով. է՛հ ուրեմն, կուզեմ միշտ գոհացնել իմ ճաշակներս...

— Մի՛շտ... մի՛շտ...

— Այո՛... բայց անգամ մը ամուսնացած, այրը պէտք է հետեւի իր կնոջը ամէն տեղ...

— Ներեցէ՛ք Օր. Ատա, թոթովեց սիրահարը, ինծի կուգայ որ կ'ըննէ որ պէտք է հետեւի...

— Ֆրանսայի մէջ կարելի է, բայց Ամերիկայի մէջ ոչ. նաեւ, հողին վրայ միաւորելէ առաջ... կուզեմ ձեզի տանիլ ինծի հետ, իմ օդային ճամբորդութիւններէս մէկուն... կուզէ՛ք փորձի ենթարկուիլ...

— Մինակ, ձեզի հետ, օդին մէջ, օ՛ երջանկութիւն...

Օր. Ատա եղրակացուց.

— Երեք հազար հինգ հարիւր մէթր գետնէն վե՛ր...

— Շատ աղէկ, շատ աղէկ, վաղը կը մեկնինք...

Արթիւր ուրախութեամբ լաճնուեցաւ, բայց ճամբան ուրախութիւնը քիչ մը մեղմացաւ. որովհետեւ օդապարիկով երբէք ճամբորդած չէր և չէր գիտեր թէ այս վերելքը ինչ արդիւնք պիտի տար իրեն:

Եւ յետոյ, կը յիշէր որ երբէք չէր կրցած ելլել, առանց գլխու պտոյտ զգալու՝ Նօթ-ուր-տամի աշտարակներուն վրայ:

Շատ գէշ գիշեր մը անցուց. հետեւեալ օրը սակայն ժամադրութեան ճշդապահ գրտնուեցաւ:

Օդապարիկը ուռած էր և իրեն կսպասէին, Օր. Ատա, օդապարիկին մէջ առաւ զայն:

— Շատ թեթեւ է այս մեքենան, տոկոն ալ է, դիտել տուաւ Արթիւր՝ իր սիրեցեալին քովը նստելով։

— Հիմակէն կը վախնաք, հարցուց Օր. Ատա։

— Բայց ո՛չ ... Բայց ո՛չ ...

— Թո՛ղ տուէք պարանոցները պոռաց Օր. Ատա և օգտապարիկը բարձրացաւ օդին մէջ արագօրէն։ Արթիւր աչքերը գոցեց։

— Կը քնանա՞ք, յարեց գեղանի աղջիկը։

— Ոչ ... Կերազեմ կոր ... շատ գեղեցիկ է ... շատ բանաստեղծական ... օդին մէջ ճամբորդելը։ Իրականութեան մէջ սակայն, Արթիւր հանգիստ չէր, ասիկա իրեն կը պատճառէր՝ Նօթրը տամի աշտարակներուն վրայ՝ վերելքի մը արդիւնքը ...

— Մհ, նայեցէք, նայեցէք, ըսաւ Օր. Ատա, հոսկէ չէնքերը ճանճի մը չափ կերեւան ...

Արթիւր գլուխը դարձուց, դէմքը երկու ձեռքերուն մէջ առաւ՝ բան մը չսեռնելու համար։ Խեղճը կը գղջար մեկնելուն համար։

— Աւաղ պիտի նետեմ, ըսաւ Օր. Ատա։

— Վար իջնալու համար կակաղեց սիրահարը ...

— Բայց ո՛չ, բարձրանալու համար ...

Արթիւր գլուխը վերարկուին մէջը առաւ, երբեք չէր մտածէր իսկ սիրաբանել, ինք որ, երբեմն, հարստութեանը մէկ մասը տալու յօժար էր՝ իր պաշտելիին հետ մինակ գլուխու համար ...

— Ահա հառանք, պոռաց, գեղանի աղջիկը ...

— Ո՛ւր ... հողին վրայ ...

— Բայց ո՛չ ... հողէն՝ երեք հազար հինգ հարիւր մէթր վեր ...

— Երեք... հազար... հինգ... հարիւր մէթրը վեր թոթովեց սիրահարը և ինկաւ օդապարիկին մէջ ...

— Ի՞նչ ունիք, հարցուց Օր. Ատա, զարմացած ...

— Օր. Ատա՛ ... Թոթովեց Արթիւր, վա՛ր իջնանք ...

— Ինչպէս չէք սիրեր զիս ալ ...

— Այո՛, կը պաշտեմ ձեզ, բայց չեմ կրնար սիրել այս բարձրութեանը մէջ ...

Օր. Ատա սկսաւ ծիծաղիլ։

— Վախկոտ էք պարոն Արթիւր ...

— Վախկոտ, ես ... պոռաց պարոնը՝ դէմքը ալ աւելի գոցելով. աներկիւզ եմ, ընդհակառակը, աներկիւզ ... հողին վրայ փորձեցէք զիս, պիտի տեսնէք որ ամենամեծ ըմբիշը իմ քովս տղայ մը պիտի երեւայ։

— Հա՛, հա՛, հա՛, շատ զուարճալի է։

— Եթէ ասիկա զուարճալի կը գտնէք, միմոաց Արթիւր, ես ո՛չ. վար իջնել խընդրեցի և դուք դեռ վեր կելլաք միշտ ... պարզապէս չարութիւն է աս Օր. Ատա ...

— Հիմակ ալ կը հայոյէք, չէնէ մի ձեր ընելիք սիրային յայտարարութիւններն են ...

— Հիւանդ եմ, պոռաց Արթիւր, ամէն բան կը դառնայ, բոխչկ մը, դացէ՛ք ինծի բոխչկ մը փնտռել ...

— Ուրկէց կուզէք, սիրելի պարոն, որ բոխչկ մը գտնամ, բոխչկան կաճառէն երեք հազար մէթր վեր կը գտնուինք ... Բայց ձեր անհանգստութիւնը կենթադրեմ որ տեւական չըլլար. սէրը ձեզի պիտի բոխչկէ ... պէ՛տք է բարձրանալ չորս հազար մէթր ...

— Չորս հազար մէթր, աղաղակեց Արթիւր, կուզեմ իջնել, կուզեմ իջնել ...

Օր. Ատա արհամարհանքով անոր նայեցաւ։

— Շատ աղէ՛կ, ըսաւ, իջնենք ...

Տասը վայրկեան ետքը, օդապարիկը մարգագետնի մը վրայ կիջնէր։ Արթիւր, ոտքը գետին դնելուն պէս՝ վայելուչ և համակրելի սիրահար մը դարձաւ ...։ Բայց, Օր. Ատա՛ որ օդապարիկին մէջ մնացեր էր, առաջ նետեց և թող տուաւ խնդուքով մը յարելով։

— Երթաք բարով, սիրելի պարոն, լաւ խնամեցէք ինքզինքնիդ ...։

Ահա ինչպէս գեղանի Ամերիկուհին վերջնականապէս հրաժարեցաւ ամուսնանալէ։

Թարգմ.

ԱՆՄԵՌԻԿԱ

— Աղջիկ մը ինչի՞ կը նմանի.

— Զատկուան չէօրէկի, ժամանակը անցնելէն վերջը կ'օթեկնայ, կ'աժաննայ և մատչելի կ'ըլլայ ամէնուն։

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ. — Տաղանդաւոր այլ ջաւոր արուեստագէտ դերասանուհի՝ Տիկին Արուսեակի յուզարկաւորութեան ներկայ գտնուելու համար հեւ ի հեւ հասնող օրուան դերասաններն տեղ չի գտներով՝ ետ դարձած են թաղման օրը: (Մնակեան կըսէ որ յարգելի Տիկինը Հիւանդանոցէն զատ ուր որ ալ ըլլար՝ սիրով պիտի ուզէի գտնուիլ և ստիպել իմիններս ալ որպէս զի գտնուին, սակայն՝ ոտքիս միջադէպը յիշելով չուզեցի նորոգել ոտքէս աւելի կոտրած սիրտիս ցաւերը. Ծ. Խ.):

ԵՖէնի-ԳԱՐՈՒ (Պոստալ իշի). — Մայիս մէկը տօնելու համար հոս հասնող զոյգ մը նշանածներ կաթի գաւաթները ձեռքերնին դիշերուան մինչեւ ժամը երկուքը ծառի մը տակ թմրած դրտնուեցան: (Ձայիւր տիւրիւնին ա'լ ասանկ ըլլալու է, մեկտեղ ծերանան. Ծ. Խ.):

ՍԿԻՒՏԱՐ. — Նոյն օրը մէկ քանի եռլի բանաստեղծ միւսիւններ կանանչ դաշտերուն մէջ գլխովին ներշնչուած առ ի չգոյէ ճերմակ թուղթին, հետերնին առած գէյքիւնին բարիէ պագարիներու վրայ թափեցին իրենց է'ն վսեմ տաղերը, զորս պիտի հրատարակուին եթէ օգերը նպաստաւոր ըլլան:

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Հոս Մօտայի զբօսարաններու տերէրը Վարչապետէն յատուկ թիւղիւ մուշտակներ բերել տալով տրամադրեր են այն կարգ մը թեթեւագգեստ տիկիններուն և օրի-

որդներուն քմահաճոյքին, որոնք պիտի գան բազմիւ սաթլըճանարոյր աթոռներու վրայ:

ՀԱՅՏԱՐ-ԲԱՇԱ. — Իր չափազանց անկանոնութիւններովը ծանօթ տէրտէր մը, անցեալ կիրակի հոս, յաջօղովուրդին երեցկինը դէմն առած Լալաի գարնջրատունը նստած գաւաթներ պարպելը . . . նա սա աչքերովս տեսայ . . . : (Կո'ւկո'ւկո'ւ . . . նոր բարիլուս. Ծ. Խ.):

ԲԵՐԱ. — Շիք բառին յորդառատ իմաստովը միւսիւ մը, մայիսի մէկին ուշ ատեն երբ ծաղկեպսակ մը ձեռքը օրիորդի մը կսպսէր զայն յանձնելու համար, հացագործի մը ձին ձեռքէն յափշտակելով ափ ի բերան ձգեց զայն:

ԱՏԱ-ԲԱՁԱՐ. Սաքարիային քաշուելէն ի վեր ի ձեռին պատրաստ մեր բաժնեգինները թէեւ միտք ունինք զրկելու Հանրագիտակին, բայց ճամբան յանկարծ գետին յորդեղուն վախը շարժման մէջ չի դնել կոր մեր աղնիւ գաղափարը . . . : (Եթէ ջուրերը մեր գործակալը չառին չի տարին հոգ չէ կը դանձենք . . . բայց թէ ո՞ր տարին. Ծ. Խ.):

ԻԶՄԻՏ. — Հոսի Շիշիին տէմիրպաշ յաճախորդները մայիսին կով մը բերելով ձրիապէս սկսան բաժնել կաթը տաք տաք, անոնց որ դէմքով մի հըրեշտակ, կըլողին չիտակ չի կլողին կատակ, ահա ձեզ լուր մը անտիպ անյատակ . . . : (Գիտցէք որ մանուշակ Հանրագիտակ. Ծ. Խ.):

Ursofiuskr ԱՐՄԻՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հասէսի բիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՈՇՐԱԾՆԵՐ

Արսնց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՁԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփաչեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիններէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ
տոկունութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
եւ տղայոց շիք եւ դիմացկուն փոքրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 շրջ. է:

Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—34



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՅԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղաչ պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյրանէ,
Ջիկասաւէ, Հնդկասաւէ, Ճապոնէ եւ Ճա-
րոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըը-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մտաւային:

Ա Պ Ա Ռ Ի Կ

6 ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիգի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, և այլն. նաև անուէններու սկզբնատառով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերարկուներ, բուրդէ և մետաքսէ չրջագգեստի կերպասներ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնս. Նովման) և այլն:

Ունինք նաև եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաև բաղնիքի, խոհանոցի եւրոպական չարժուէն օճախ և լն.:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ շահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաև իր ապրանաջ տոկունութիւնը, նրբութիւնը և աժաւ նութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք գիմել ՀԵՐՃԱՅԻ վաճառատուն

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

50—23: